

Հրատարակ. Բ. Հ. Կուլտուրական Միութեան
Հրատարակչական Մասնամիջոց—№ 17

ԳՐԱԳ. ՀԱՅԱՑ ՊԱՏՄԱՌՈՒԹՅԱՆ

№ 7

1831.

Գրքերի մասին

ՎԱՀԱՆ

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ԳՐԱԳ.

Մ. ԱՌԱԳԵԼԵԱՆ

Издание Б. А. КУЛЬТУРНАГО СОЮЗА
Издательской секции—№ 17
Очеркъ изъ армянской истории № 7
В. А. ГАՆ՝ МАМИКОНՅԱՆ
Составилъ М. Аракелянъ
Электронпечатня газ. „Баку“.
г Баку, 1910 г.

9(47.925)

Ա-70

ԲԱԳՈՒԱՅ ՀԱՅՈՑ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՄՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ՀԵՏԵԻԵԱԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Պատանեկան Գրադարան՝ №№ 1—17
Իւրաքանչիւր գիրքը — ռ. 30 4.
 2. Хрестоматія—Ս. Մանդիկեանի — „ 75 „
 3. Դիւան հայոց պատմութեան—Գիւրս ա. ֆ.
Աղանեանի 4 „ — „
 4. Բանաստեղծութիւններ — Յ. Յովնանի-
սեանի 1 „ 50 „
 5. Վէրք Հայաստանի—Խ. Աբովեանի — „ 50 „
 6. Վիլհէլմ Տէլլ—Վ. Օսրոգորսկու — „ 5 „
 7. Տրքնի—Վ. Օսրոգորսկու — „ 5 „
 8. Գործնական շերամապահութիւն—Կ. Մե-
լիֆ-Շաննազարեանի — „ 5 „
 9. Բամբակի մշակութիւնը — Ն. Տարսնի-
նովի (Թարգմանութիւն) — „ 3 „
 10. Մանր վարկի հաստատութիւնները — „ 5 „
 11. Բուսական աշխարհ—Կ. Մելիֆ-Շաննա-
զարեանի — „ 5 „
- ԴՐՈՒՅՆԵՐ ՀԱՅ. ՊԱՏՄՈՒԹ. №№ 1—7
12. Արաւէտ երկրորդ—Վ. Փափազեանի — „ 15 „
 13. Գաղիկ երկրորդ նոյնի — „ 15 „
 14. Վարդանանց պատերազմը նոյնի — „ 30 „
 15. Տրդատ և Գրիգոր Լուսաւորիչ—Մ. Առա-
մէանի — „ 15 „

9/47.925)
Q-70
19 AUG 2011
24 JAN 2006
Հրատարակ. Բ. Հ. Կուլսուրալեան Միութեան
Հրատարակչական Մասնաձիւղի—№ 17

ԳՐԱԿ. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ
№ 7

ՎԱՀԱՆ
1006
28948
ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Գ Ր Ե Յ
Մ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Издание Б. А. КУЛЬТУРНОГО СОЮЗА
Издательской секции—№ 17
Очеркъ изъ армянской истории, № 7
ВАГАНЪ МАМИКОНЯՆ
Составилъ М. Аранельянь.
Электротпечатня газ. „Баку“.
г. Баку, 1910 г.

1.

Վարդանանց յայտնի ճակատամարտի վրայ տարիներ էին անցել, սակայն Հայաստանը դեռ չէր կարողանում ոտքի կանգնել իր կրած դառն հարձակներից: Ամբողջ երկիրը նման էր յուզարկաւորութեան տան, նրա եկեղեցիներն ու վանքերը աւերւած էին, սրբութիւնները պղծւած, արտ ու անդաստան խոպանացած: Նա զրրկւած էր իր լաւագոյն զաւակներէից:

Նրանցից շատ-շատերն ընկել էին կռւի գաշտում, ուրիշները, պարսիկների կողմից այնքան առատօրէն բաշխւած պաշտօններից, պատիւներից ու պարգևներից շացած, օտարացել էին իրենց հայրենի հաւատքից և ուխտադրութեան կնիքը ճակատներին, որդ գարձած, կրծում էին իրենց սեփական մարմինն և օր օրի վրայ տարաբաղդ հայքենիքն աւելի ու աւելի մօտեցնում էին կորստեան անդունդին: Իսկ շատերն ևս, կարօտ իրենց սիրելիների ու հարազատների տեսութեան, հեռու հայրենի երկրի սահմաններից, հալւում ու մաշւում էին ծանր կա-

պանքների տակ խուժաստանի մութ ու խոնաւ բանտերում:

Պարսկաստան գերի տարւած հայ նախարարների ցոյց տւած յամառ դիմադրութիւնը, նրանց աննկուշ արիութիւնը վերջապէս խեղամտեցնում է պարսից Յազկերտ թաշաւորին:

Նա հասկանում էր, որ իր նիւթական հաւածանքներն անգոր են հայ իշխաններին կրօնափոխ անելու, մինչդեռ նրանց բացակայութեան պատճառով Հայաստանն աւերւում էր և պարսկական արքունիքը զրկւում իր խոշոր արդիւնքներից: Ուստի նա համաձայնում է վերջապէս արձակել նրանց իրենց հայրենիքը, հաստատելով ամեն մէկին իր նախկին էոջման ու հայրական իրաւունքների մէջ:

Սակայն հէնց այդ ժամանակ մահը վրայ է հասնում և նա չի կարողանում իր խոստումը կատարել, որովհետեւ նրա մահից յետոյ, երկու օրոց մէջ խռովութիւն է ընկնում գահի համար և կրասեր օրդին՝ Պերոզ սպանում է իր մեծ եղբօրը՝ Որմզդասին և ինքը բարձրանում պարսկական գահը:

Բայի այդ ներքին խռովութիւնից, հայ իշխանների հայրենիք վերադառնալը յետաձգող պատճառներից մինն ևս լինում է այն, որ ազանների թագաւորը, չղջալով քր հաւաքքն ու բանալու վրայ, միանում է հիւսիսային Կովկասի

լեռնականների հետ և, պատերազմի պատրաստութիւն տեսնելով, ապստամբում է պարսից դէմ:

Սակայն Պերոզ համաձայնում է քրիստոնէական կրօնը ազատ պաշտելու վերաբերմամբ ազանների թագաւորի էոդմից դրած պահանջին, պատերազմը տեղի չէ ունենում և գործը վերջանում է հաշտութեամբ:

Այս հաշտութիւնից յետոյ է, որ Պարսկաստան տարալրւած հայ նախարարները, մօտ 12 տարի բանտարկեալի բոլոր դառնութիւնները ճաշակելուց յետոյ, վերջապէս ազատւում են և իրաւունք են ստանում Հայաստան վերադառնալու, 463 թ.:

Յազկերտի մահւամբ և Պերոզի գահ բարձրանալով պարսկական տէրութեան՝ հայերի ու Հայաստանի վերաբերմամբ ունեցած հիմնական քաղաքականութեան մէջ ոչ մի փոփոխութիւն չէր կատարւել: Պարսկաստանը դարձեալ իր բոլոր ոյժով ձգտում էր արմատախիլ անել քրիստոնէութիւնը, որից յետոյ միայն հնաբաւոր էր համարում հայ ժողովրդին ամբողջովին ձուլել իր մէջ:

Բայց պէտք է աւելացնել, որ Վարդանանց պատերազմի հետեանքները, երկու կողմից տեղի ունեցած անփոխարինելի կորուստները, հայերի կողմից երեան բերւած դիւցազնական դիմա-

դրութիւնը՝ սկզբից մինչև նախարարների Հայաստան վերադառնալը, պարսիկ գահակալներին համոզել էին, որ բռնի միջոցներն անկարող են ցանկացած նպատակին հասցնելու: Անցեալի դաւը փորձերը խելքի էին բերել Յաղկերաի յաջորդ Պերոզին, և նա հայոց վերաբերմամբ իր քաղաքականութիւնը կտրուկ կերպով փոխել էր:

Նախկին բացարձակ հալածանքների ու կոպիտ բռնութեան փոխարէն, նա ձեռք էր առել խորամանկ ու նուրբ միջոցներ և Դւին նստող պարսիկ Ատրվշնասոյ մարզպանին յատուկ հրահանգներ էր ուղարկել, — քաղցրութեամբ վարել հայոց հետ և, որքան կարելի է, գրաւել ու սիրաշահել հայերի սիրտը:

Պարսիկ պաշտօնեան շատ լաւ էր ըմբռնում իր ինքնակալի ուղարկած հրահանգների իմաստը: Ատրվշնասոյը խորամանկ ու նենգ միջոցներով մօտենում ու բարեկամութիւն էր հաստատում հայ նախարարների հետ, շոյում ու փայփայում էր նրանց ինքնասիրութիւնը և ոչ մի միջոցի առաջ կանգ չէր առնում պարզկներով ու պաշտօններով գրաւելու նրանց սիրտը:

Նա մէնակ չէր այդ ուղղութեամբ ձեռք առած իր գործունէութեան մէջ: Նրան ձեռնապահ ու օգնական են հանդիսանում նոյն այդ ժամանակներն երկրում ապրող հայ սխտադրութ

նախարարները, իրենց պարագլուխ ունենալով Գաղիշո Խորխոռունուն, Գտիհոն Սիւնիին և ուրիշներ:

Երկրում ստեղծւել էր անտանելի մի դրութիւն: Հաւատարմութիւնը, վեհանձնութիւնը, ճշմարտութիւնն ու արգարամտութիւնը դադարել էին առաքինութիւն համարելուց: Նա էր գովելի, նա էր գնահատում, առաջ տարւում, փառքի ու պատիւների արժանանում, ով որ ուրանում էր իր հաւատքը: Իրաւ և հնազանդ գործիք էր դառնում պարսիկ մարզպանի ձեռքում, իսկ նրանք, որոնք իրենց խղճի ազատութիւնը, քրիստոնէական կրօնը բարձր էին դասում պարսկական կրակի ու արեգակի պաշտամունքից, — այդպիսիք հալածւում էին և զրրկւում իրենց հայրական կալածներից, պատուից ու պաշտօնից: Դրանք յետ էին մղւում և դրանց տեղը առաջ էին քաշւում անարժան, ապիկար, փոքրոգի ու ստոր անձնաւորութիւններ: Եւ պարսկական քաղաքականութեան այդ սուր յեղաշումը շատ աւելի յաջող հետեանքներ էր տալիս, քան նախկին բարբարոսական հալածանքները:

Ժամանակի կաթողիկոսը Գիւտ, սրտի դառնութեամբ տեսնում էր, թէ ինչպէս երկիրը հսկայական քայլերով դիմում էր դէպի անկում:

Պարսկական կրօնի պաշտամունքը օր ըստ

օրէ աւելի ընդարձակ ծաւալ էր ստանում, որովհետեւ ուրացող իշխանների թիւը քանի զնում բազմանում էր: Դրանք, պարօխկ կառավարութիւնն իրենց թիկունք ունենալով, ամեն տեսակ ցածութիւնն անում էին և անպատկառ կերպով խորխորում ուխտապահ իշխանների վրայ:

Այս վերջիններից ոմանք, շարունակ ահ ու սարսափով շրջապատւած, մտածում էին ամեն բանից ձեռք քաշել ու երթալ ապաւինել քրիստոնեայ երկրներից մէկին կամ միւսին, իսկ առաւել հաստատակամներն ու արիասիրտները, շատ անգամ սաստիկ զայրանալով հակառակ բանակի կատարած անզգամութիւնների վրայ, հաւաքւում էին Գիւտ կաթողիկոսի մօտ, խորհրդակցում էին, թէ ինչ ճանապարհով կարելի էր ազատւել այդ խեղճող միջնորդից:

Այդ ժողովներից մէկի ժամանակ էր, որ նախարարներից ոմանք միտք են յղանում յուսաց նոյն ժամանակի Լեոն կայսրի օգնութեան դիմել: Երկու անգամ պատգամաւորութիւն են ուղարկւում նրան, բացատրւում են իրենց ցաւերը, երկրի դժւարին կացութիւնը, պարսիկ կառավարութեան ձեռք առած նենգամիտ քաղաքականութիւնն և խնդրում են հայաստանի այդ մասն ևս իր իշխանութեան տակ առնել:

Լեոն կայսրը, սաստիկ զբաղւած լինելով կրօնական ներքին վէճերով, հակառակ իր ցանկութեան, չի կարողանում դրական մի օգնութիւն անել, այլ միան ցանկացողներին խորհուրդ է տալիս գալ ու իր երկրի սահմաններում բնակւել: Նախարարներից շատ քչերն են կայսրի այդ հրաւերն ընդունում, իսկ մեծամասնութիւնը, որի մտատանջութեան առաւելան իր սեփական հանգստութիւնից առաջ, բովանդակ երկրի ալէկոծ դրութիւնն էր, չի համաձայնում կայսրի այդ առաջարկին և մնում է իր բնիկ երկրում:

Միակ անձը, որ դեռևս կարող էր համարձակ բողոքել իր շուրջը կատարւող անիրաւութիւնների դէմ, — դա Գիւտ կաթողիկոսն էր:

Երկրի սիրտը կրծող շարիքի բուն որմատը ուխտադրութ նախարարների բռնած ընթացքի մէջ տեսնելով, նա այլևս սկսեց խիստ կերպով յարձակւել նրանց վրայ, ամեն քայլափոխում յանդիմանել ու կշտամբել նրանց արարքներն ու վարած կեանքը և, ընդհակառակը, պատւել ու բարձրացնել այն իշխաններին, որոնք հաւատարիմ էին գտնւում իրենց մայրենի եկեղեցուն:

Ինչ կարծիք, որ հայրապետի այդ դառը կշտամբանքներն ու կծու յանդիմանութիւնները

ամենեւին դուր չէին գալիս ուխտադրութիւններին, մանաւանդ, նրանց պարագլուխ Գաղիշո Խոր-խոռունուն, որը զայրանալով կաթողիկոսի վրայ իրենց դէմ նրա ձեռք առած այդ համարձակ արշաւանքի համար, թշնամացաւ նրա հետ և միտքը դրեց վրէժխնդիր լինել նրանից:

Այդ նպատակով նա գնաց Պարսկաստան, գուրս եկաւ Պերոզ թագաւորի առաջ և ամեն տեսակ չարախօսութիւններ արեց կաթողիկոսի մասին, ասելով, թէ Գիւտ կաթողիկոսն է կրօնափոխութեան գործի Հայաստանում այդքան դանդաղ առաջանալու պատճառը, որովհետեւ սաստիկ հալածում է պարսկական կրօնի հետևորդներին և թէ յունաց կայսրի հետ գաղտնի բանակցութիւնների մէջ լինելով, աշխատում է երկիրը պարսից իշխանութեան դէմ ապստամբեցնել: Այդ զրպարտութիւններն այն աստիճան Պերոզին զայրացրին, որ նա ստիպւեց կաթողիկոսին կանչել իր մօտ և տեղնուտեղը ստուգել նրա մասին պատմածները: Կաթողիկոսը գնաց Պարսկաստան, ներկայացաւ թագաւորին և իր համարձակ ու կտրուկ պատասխաններով նրա բարկութիւնն աւելի ևս զրգռեց իր դէմ: Դրա հետևանքն եղաւ այն, որ նա պարտաւորւեց հայրապետական գահից հրաժարւել և Հայաստան վերադառնալուց յետոյ, նրա տեղն ընտրւեց Արծրունեաց տոհմից Քրիս-

տափօր:

Հայ նախարարները դրութիւնը համարում էին անտանելի: Ամենքն էլ այն համոզման էին, թէ անհրաժեշտ էր կտրուկ միջոցների դիմել, սակայն չկար նրանց մէջ մէկը, որ այդ ցրւած ոյժերն ի մի համախմբէր: սիրտ ու հոգի ներշնչէր և առաջնորդէր նրանց դէպի ցանկացւած նպատակը:

Այդպիսի զօրեղ անձնաւորութիւն մօտիկ անցեալում տւել էր Մամիկոնեան տոհմը: Այդ միւլենոյն տոհմն էր ահա, որ հայրենիքի այդքան տագնապալի րօպէսներում դարձեալ հրապարակ պէտք է հանէր իր ամենաընտիր զաւակներից միւնը, պարսկական ոտնձգութիւնները դիմադրաւելու և բաղդից հալածւած մի ժողովրդի մարդկային իրաւունքները վերականգնելու համար:

Այդ անձը Վահան Մամիկոնեանն էր:

2.

Հայ նախարարների Պարսկաստան դերի գտնւած ժամանակ, Վասակ յայանի ուխտադրութ իշխանի ձեռքով պարսկական արքունիքն էին տարւել Վարդան Մամիկոնեանի Հմայեակ եղբոր երեք որդին՝ Վահան, Վասակ և Արաաշէս և իբրեւ պատանդ պահւում էին այն-

տեղ:

Գուգարաց աշխարհի Աշուշա բզեշիւր, որ այդ ժամանակ նոյնպէս գտնուում էր պարսկական արքունիքում, ազգականական կապերով կապւած լինելով այդ երեք երեխայի ընտանիքի հետ, սաստիկ աղաչանք-պաղատանքից յետոյ, կարողանում է վերջապէս երեխաներին ստանալ Պերոզ թագաւորից, տանել իր երկիրն ու յանձնել նրանց իրենց Ծւիկ մօրը խնամքին: Երեք եղբայրն ևս սնւում ու դաստաւիրուելում էին իրենց խաթուն մօր անմիջական հսկողութեան տակ, որը ժամանակի նշանաւոր հայ կանանցից մինն էր:

Միքանի տարի Գուգարաց աշխարհում մնալուց յետոյ, Վահան ու իր եղբայրները վերցնելով իրենց հետ իրենց մօրը, վերադառնում են հայրական ստացւածքը՝ Տարօն: Երեքն ևս խելացի, շնորհալի երեխաներ էին, սակայն մեծը՝ Վահան, որ դաստաւարակւում էր Յովհան Մանգակունի կաթողիկոսի ձեռքի տակ, մասնաւորապէս ամենքի ուշադրութեան առարկան էր: Ժամանակակից պատմիչ Դադար Փարպեցին ահա թէ ինչպէս է խօսում Վահանի մասին.

„Իա խելացի, առողջ դասողութեան տէք, բարեսէր մարդ էր. ինչ գործի էլ ձեռնարկելու լինէր, յաջողութեամբ էր վերջացնում, որով որ ըստ օրէ աւելի ու աւելի էր զօրանում:

Նոյն իսկ պարսից արքունիքից եկած գործակաւները ակամայից սիրում ու պատուում էին նրան, մինչև իսկ իրենց թագաւորի առաջ գտնւում ու բարձրացնում էին նրա գործերն և երբէք չէին մոռանում նրան: Պերոզ թագաւորն ևս ճանաչելով նրան, լաւ համարում կազմեց նրա մասին, ամենքի առաջ գովաբանում ու պատիւների արժանի էր համարում նրան“:

Վահան Մամիկոնեանի վարքն ու բարքը, նրա եռանդուն ու ազնիւ գործունէութիւնն ու ժողովրդի աչքում նրա օր ըստ օրէ աւելի ու աւելի բարձրանալը հանգիստ չէր տալիս ուրացող նախարարներին, մանաւանդ Գաղիշ խորխուռունին, որը ուշի ուշով դիտում էր Վահանի ամեն մի քայլը:

Գատիշոն, մտածելով, որ Վահան իր կատարեալ հոսակն առնելուց յետոյ, առաւել ևս վտանգաւոր կդառնայ, ամեն կերպ աշխատում էր վերացնել իր ճանապարհի վրայից գայթակղութեան այդ քարը, օր առաջ ոչնչացնել նրան: Ուստի, ինչ հետ միացնելով իր կամուկիցներին, Պերոզ թագաւորին ուղղւած ամբաստանական ընդարձակ մի նամակ է պատրաստում, գրելով, թէ Վահանը մտածում է երկիրը պարսից իշխանութեան դէմ ապստամբեցնել, արդէն բազմաթիւ զօրք է ժողովել և շատ չի

քաջի ձեր դէմ պատերազմ կհրատարակի, թէ դա փաստակար անձնաւորութիւն է և կարող է մեծամեծ փլասներ հասցնել պարսից տէրութեան, ինչպէս մի ժամանակ հասցրել են նրա նախնիքները, ակնարկել ուղեւոր Վարդան Մամիկոնեանի գործունէութիւնը:

Վահան Մամիկոնեան զգում էր, որ իր դիրքը խախտւած էր, հասկանում էր, որ հակառակորդները կարող էին իրեն ամեն տեսակ փլասներ հասցնել, ուստի պէտք էր անմիջական միջոցներ ձեռք առնել, եթէ չէր ցանկանում իր թշնամիներից յաղթահարւած լինել:

Այդ նպատակին հասնելու միակ ճանապարհը պարսկական արքունիքի հետ մօտենալն էր և Վահան, հակառակ իր համոզումներին, ձգտումներին և իր պարտականութիւնների գիտակցութեան, վճռեց այդ մահաւան շափ ծանր քայլն անել:

Նա թողեց հայրենիք, տուն ու տեղ և գործ, ճանապարհ ընկաւ դէպի Պարսկաստան, ներկայացաւ Պերոզ թագաւորին և իր ամբողջ էութեամբ աշխատեց իր դէմ յարուցւած ամբաստանութիւնները ջրել:

Սակայն դժւար էր այդքան զրպարտութիւնների տակից լոկ խօսքերով դուրս գալ: պարսիկ ինքնակալին հարկաւոր էր փաստ, և Վահան Մամիկոնեան հաւատարիմ հպատակի

իր նախկին վարկը Պերոզի աչքում վերականգնելու համար ոչ մի գրաւական չէր կարող ներկայացնել, քան այն, որ նրան հաւատացնէր, թէ ինքը հեռացել էր քրիստոնէութիւնից և ընդունել էր կրակապաշտութիւնը, այսինքն հետեւէր այն քաղաքականութեան, որին հետեւել էին միջանի տասնեակ տարի առաջ Վարդան Մամիկոնեանի, Հմայեակ Դիմաքսեանի, Խորէն Խորխոռունու և ուրիշների նման հայրենիքի համար իրենց գլուխը դրած վեհ անձնաւորութիւններ:

Պերոզը թէև իր վերաբերմունքը դէպի Վահանը քաղցրացրեց, սակայն բոլորովին էլ վրաստան չէր նրա արած այդ քայլի անկեղծ լինելու վերաբերմամբ: Հէնց այդ պատճառով էլ իր մօտ բերել տւեց նրա կքոսեր եղբայր Վարդին, որ այդ ժամանակ ապրում էր Տայոց աշխարհում իր դայեակի խնամքի տակ: Նրան իր մօտ պատանդ պահեց և Վահանին արձակեց իր երկիրը:

Որքան էլ կեղծ լինէր իր հաւատուրացութիւնը, այնուամենայնիւ սաստիկ ազդում էր Վահանի վրայ: Նա վերադարձաւ Հայաստան և սաստիկ խղճահարւում էր իր այդ արարքի համար:

Առանձնացած բոլորովին և ինքն իր մէջ կեդրոնացած, վարում էր խիստ անշուք ու

մուսլ կեանք: Ուխտապահ նախարարները դատապարտում էին նրա վարմունքը և դգուշանում էին նրանից, իսկ ուխտադրութենքը թէև սկսեցին ակնածանքով վերաբերել դէպի նա, սակայն տեսնելով, որ Վահանը պարսից թագաւորի կողմից աւելի բարձր պատիւների է արժանացել,—նախանձում էին նրա վրայ: Որեիցէ գործի կամ ձեռնարկութեան մէջ անյաշտութեան հանդիպած դէպքում ամբողջ պատճառը համարում էին Վահանին, և այդպիսով նրանց ատելութիւնը դէպի նա օր օրի վրայ աւելանում էր ու շարունակ չարախօսում էին նրա մասին:

Իսկ Դուին նստող պարսիկ Ատրիշնասպ մարզպանը սիրով ու քաղցրութեամբ էր վարւում Վահանի հետ:

Այդ ժամանակ Հայաստանի ոսկու պետական հանքերի վերատեսչութիւնը յանձնւած էր Վրիւ անունով մի մարդու, որը գլխարկութեամբ էր կառավարում գործը և շատ անգամ իր անտեղի կարգադրութիւններով խոշոր վնասներ էր ապրիս արքունիքին:

Վահանը սկզբում սկսեց Վրիւին միայն գործակցել, սակայն շատ չքաշեց, որ ամբողջ գործը հաւաքեց իր ձեռքն և ամբողջ ոսկին անձամբ գանձելով, ինքն էր ուղարկում Պարսկաստան:

Կասկած չկայ, որ այդ բանը Վրիւին դուր չեկաւ: Զայրացաւ Վահանի վրայ և, Պարսկաստան երթալով, սառտիկ չարախօսեց Վահանի մասին ասելով, թէ նա ոսկին հաւաքում է իր ձեռքը, որպէսզի հարստութեան ոյժով դաշն կապի յոյների կամ հոնների հետ և նրանց օգնութեամբ ապստամբի պարսից տէրութեան դէմ:

Վահանն այդ զրպարտութիւնների առաջն առնելու համար, վերցնելով իր հաւաքած ոսկին, գնում է Պարսկաստան, ներկայանում է Պերոզ թագաւորին և, մատուցանելով նրան ոսկու կոյտերը, ասում է. „Տէր թագաւոր, սուտ են իմ մասին ձեզ խօսւածները. եթէ այդ ոսկին սեփականացնելու նպատակով հաւաքած լինէի, չէի բերի այստեղ, դա կարող էր ինձ մինչև կեանքիս վերջը բաւականանալ. իսկ որ ապրտամբելու մտադրութիւն չեմ կարող ունենալ, դրա ապացոյցն այն է, որ ինձ համար կերակուր պատրաստող մի ծառայ անգամ չունեմ“:

Թագաւորը չի կարողանում նրա մասին եղած ամբաստանութիւններն ապացուցանել և նա բոլորովին անպարտ դարձեալ արձակւում է իր հայրենիքը:

Այնուամենայնիւ խղճի խայթը հանգիստ չէր տալիս նրան, գիշեր ցերեկ չարաշար տանջւում էր և ամբողջ մտածմունքը ուրիշ բան

չէր, եթէ ոչ հաւատափութեան կեդար մի կերպ սրբել իրենից և պատուով մեռնել, ինչպէս վարել էին իր նախնիքները:

Պատւի զգացմունքն քանի գնում զօրանում էր նրա մէջ և յարմար ժամանակի էր սպասում իր ծրագրներն ի կատար ածելու:

Վերջապէս վճռեց իր մտադրութիւնները յայտնել ուխտապահ նախարարներին, որոնք, կասկածելով հանդերձ նրա անկեղծութեան վրայ, նրան խորհուրդ էին տալիս ոչ մի ջանք չխնայել ուրացող անունն իր վրայից ձգելու համար:

Այդ ժամանակներն էր, որ Քրիստափոր կաթողիկոսը վախճանւում է և Վահան Մամիկոնեանի ձեռներէցութեամբ ու բոլոր նախարարների հաւանութեամբ հայրապետական գահն է բարձրանում Յովհան Մանգակունի 75 ամեայ ծերունին, որ իր ամբասիր վարքով ու քրիստոնէական կրօնի գիտութեամբ ժամանակի հոգևորականների մէջ յայտնի տեղ էր զբաղւում:

3.

Պերոզ թագաւորը 480 թ. պատերազմ է սկսում հեփթաղների (հիւսիսային Կովկասի լեռնականները) հետ: Երբ իր զօրքի գլուխն անցած հասնում է Աղւանք, Հայաստանի Ատրրվչնասպ իր մարզպանին հրաման է ուղարկում,

որ հայոց զօրքերը վերցնի գայ Աղւանք իրեն օգնութեան: Մարզպանն անդանդադ կատարում է իր թագաւորի հրամանն և, առաջնորդելով հայ զօրքին, հասնում է ժամադրւած տեղը:

Պերոզը հայ զօրքն Ատրվչնասպի հրամանատարութեան տակ դնելով, թողնում է Աղւանից աշխարհի սահմանները պահպանելու, իսկ ինքն արշաւելով դէպի հիւսիս, գլխում է հեփթաղների վրայ: Այդ պատերազմն անյաջող ելք է ստանում Պերոզի համար. նա յաղթւում է, իր անհաշիւ քայլի համար պարտաւորւում է խոշոր տուգանք վճարել և խաղաղութեան դաշն կնքելուց յետոյ, դարձեալ Աղւանքի վրայով վերադառնում է Պարսկաստան:

Մինչդեռ հայ զօրքն Աղւանից աշխարհից դեռ չէր վերադարձել, Վրաստանում տեղի է ունենում պետական խոշոր յեղաշրջում:

Երգ դարի վերջերը Վրաստանի վրայ թագաւորում էր Վագգէն անունով մէկը, որ Վարդանանց ժամանակ պարսկական կրակապաշտութիւնն ընդունելով, վերադարձել էր իր երկիրն և ոչ մի ջանք չէր խնայում քրիստոնէութիւնը հիմնովին ջնջելու:

Նա չի կարողանում իր նպատակներին հասնել, որովհետեւ վրաց ազնւական տոհմից Վախթանկ բղեշխր ապստամբում է Վագգէնի դէմ, սպանում է նրան և թագաւորում է Վրաստանի

վրայ: Ոչ միայն այդքան, հապա նա մտածում էր պարսկական լուծն ևս թօթափել:

Այս լուրը կայծակի արագութեամբ տարածւում է Աղւանքում շաղաղ հայ գործի մէջ, ոգևորում, ուրախութեամբ լցնում է այգաւեղ գտնուող հայ ուխտապահ նախարարներին, որոնք լի մօտիկ ապագայի քիչ-շատ բարեյաջող յոյսերով, վերագառնում են Հայաստան և ցրւում իրենց տեղերը:

Ուխտապահ նախարարներից ոմանք, ի մի գումարելով, մտածում են, թէ չի՞ կարելի արդեօք ժամանակի առաջ բերած այդ բարեյաջող հանգամանքներից օգտւել, միանալ վրայ կամ հոնաց հետ և ընդհանուր ոյժով երկիրն ազատել պարսկական լծից:

Ծանօթ լինելով նաև Վահան Մամիկոնեանի ներքին խորհրդներին, որ յարմար ժամի էր սպասում, գալիս են նրա մօտ, յայտնում են նրան իրենց նպատակն և յորդորում, որ նա էլ միանայ իրենց: Վահանը օգտւում է սովորից և, դառնալով նախարարներին, զգացւած սրտով ասում է նրանց.

—Դուք արդէն իմանում էք, թէ որքան ծանր է այդ անպատիւ անունն ինձ վրայ կրել: Ես ոչ գիշերը քուն ունեմ, ոչ էլ ցերեկը գաղար. ինքս ինձ գծբաղղ եմ համարում ծնած լինելուս համար. կեանքն իմ աչքումս կորցրել

է իր հրապոյրը: Սակայն իմ գրութիւնս այդքան ծանր լինելով հանդերձ, գժւարանում եմ ձեր առաջարկին համաձայնել, որովհետև մեզ շատ դժուար է մեր սեփական ոյժերով Պարսկաստանի նման հզօր մի պետութեան գէժ մտկոտանի իսկ յոյս դնել խորամանկ ու խաբէրայ յոյների վրայ և կամ հոներից օգնութիւն սպասել, որ նոյնպէս մի անգօր ու սակաւամարդ երկիր է, — շատ դժուար է, մանաւանդ, որ գլխաւորն է, նոյն իսկ ձեզ վրայ վստահ չեմ:

—Միթէ քիչ է պատահել, որ մերոնք խօսք են տալիս, համաձայնում են, մինչև իսկ ուխտում են, սակայն յետոյ ամենատապալից տուժում են, սակայն յետոյ ամենատապալից տուժում են, զրոյցներում զրոյցում են իրենց խօսքը: Դուք ստախօս էք ու խոստամազանց... Այս ամենն ի նկատի ունենալով, մեծ խոհեմութիւն տրած կըլինենք, եթէ հետո կենանք այդպիսի խորհրդներից, որոնց զործադրութիւնը, գուցէ, աւելի ևս վատթարացնի երկրի գրութիւնը:

—Այդ ամենը, ինչ որ ասացիր, արդար ու խելացի է, — պատասխանում են նախարարները խելացի է, — սակայն պէտք է իմանաս, որ մենք Վահանին, — սակայն պէտք է իմանաս, որ մենք մեր բոլոր յոյսը հոների կամ յոյների վրայ չենք դրել. մեր յոյսն ամենից առաջ կազմում են մեր բազուկները. մենք պատրաստ ենք մեր անձը զոհաբերելու հայրենիքի ու մայրենի ֆանքը գնաբերելու համար. շատ աւելի լուր է, կեցեցու փրկութեան համար. շատ աւելի լուր է,

որ մենք ամենքս մի ժամայ մէջ մեռնենք, քան ամեն մի բոլէ մեր աչքերով տեսնենք մեր սիրելիների կրած տառապանքները, մեր եկեղեցիներին, կանանց, մայրերին ու քոյրերին անհաւատների կողմից հասած դառն անարգանքները...

Վահան: ու նրա եղբայրը Վասակ նախարարների բերանից անձնագոհութեան այդպիսի խօսքեր լսելով, սիրտ առին, քաջալերւեցին և իրենք ևս պատրաստակամութիւն ցոյց աւին արեան մինչև վերջին կաթիլը մաքառել անպատկառ թշնամու դէմ:

Մի բան, որ դեռևս մտատանջում էր Վահանին, այդ իր եղբայր Վարդի պարսկական արքունիքում պատանդ գտնւելու հանդամանքն էր: Կարծիքների ու զգացումների այդ բուռն փոխանակութիւնից յետոյ, խաչ ու աւետարան բերին և զրանցով երգւեցին՝ հաւատարիմ մնալ իրենց ուխտին և մինչև վերջին զինուորը կուել կրակապաշտ Պարսկաստանի դէմ:

Այս հանդիսաւոր ուխտադրութիւնից յետոյ, ամենքը ցրւեցին իրենց տեղերը: Սակայն, գտնւեց նախարարներից մինը՝ Վարդգէսը: Ամատունին, որ գնաց պարսիկ մարզպանի մօտ և ամեն բան պատմեց:

Շատ հասկանալի է, որ հայ նախարարների միաբանելու այդ լուրը, որ շատ էլ չէր սպաս-

ւում, խիստ մտատանջութեան մէջ է ձգում մարզպանին և իրարանցում առաջ բերում ուրացող նախարարների մէջ:

Դրանք սաստիկ անհանգիստ և ամեն բոլէ յարձակման սպասելով, հաւաքւում, պատրաստւում և ամենայն զգուշութեամբ հեռանում են Շիրակ գաւառի Մնի գիւղը, այդտեղից ևս դէպի Արտաշատ քաղաքը, ուր նստում էր Ատրվշնասպ մարզպանը: Ուխտապահներն իմանում են նրանց փախուստը, ընկնում են նրանց ետևից, սակայն հազիւ կարողանալով միայն վերջին շարքերին հասնել, շատերին ձերբակալում են, ի թիւս որոնց և Գաղիշո Խորխոռունուն և բերում են իրենց հետ Դւին, իսկ զօրքը գնում ու պաշարում է Արտաշատը:

Ատրվշնասպ ու իր համախոհները միանգամայն խռովւելով հայոց այդ անակնկալ շարժումից, որ կարճ ժամանակի ընթացքում կարող էր շատ վտանգաւոր կերպարանք ստանալ, դիշերով գաղտնի թողնում են քաղաքն և սահաւթիւ մարդիկներով փախչում դէպի Ատրպատական:

Հայ նախարարները հէնց որ իմանում են մարզպանի փախուստի մասին, հաւաքւում են Դւին, խորհուրդ են անում, կազմւում ու կազմակերպւում են, Սահակ Բագրատունի իշխանին նշանակում են մարզպան, Վահան Մա-

միջկոնեսանին՝ զօրքի ընդհանուր հրամանատար
և կրկին երգւում են մինչև վերջը հաւատարիմ
մնալ իրենց խոստման և սիրով կատարել սպա-
րապետի բոլոր հրամանները:

Մինչ հայերն այդ պատրաստութիւնների
վրայ էին, ուրացող նախարարները շտապում
են Ատրվշնասպի մօտ, խորհուրդ են առնում նրան,
որ առանց ժամանակ կորցնելու, զօրք պատ-
րաստի ու յարձակւի հայաց վրայ, քանի հայերը
մէնակ են և ոչ մի տեղից դեռ օգնութիւն չեն
առնայել:

Ատրվշնասպը հետեւում է իրեն տրամ խոր-
հրդներին, Ատրպատականից նոր զօրք է գու-
մարում և նորից մտնելով Հայաստան, գալիս ու
հասնում է Նրասի գետի ափը:

4.

Պարսիկ մարզպանի նոր զօրքով կրկին
հայոց երկրի սահմանները մտնելը շփոթեցնում
է Վահանին ու նրա կամակիցներին: Նրանք
մտածում էին ինչ դիրք բռնել: Ոմանք խոր-
հուրդ էին առնում, մի առ ժամանակ քաշւել
Տաշոց աշխարհի ամուր տեղերն ու այնտեղ
պաշտպանւել, սակայն, մեծամասնութիւնը, մտա-
ծելով, որ պարսից զօրքը շատ մեծ չի կարող
լինել, նպաստակցարմար էր համարում յար-

ձակւել նրանց վրայ: Որոշւում է, որ Սահակ
Բագրատունին և Վահան սպարապետը նախա-
ըարներէից ոմանց հետ մնան Դւին, իսկ զօրքի
մի մասը միւս նախարարների առաջնորդու-
թեամբ, որոնց թուփն էին Վահանի եզրայր
Վասակը, Գարշոյլ Մաղխազունին, Բաբկէն Սիւ-
նին և ուրիշներ, երթան Վարազկերտ գիւղն ու
այդտեղ սպասեն:

Վասակ Մամիկոնեանի միջոցով տեղեկա-
նալով պարսից զօրութեան, որ բաղկացած էր
բաւական բազմաթիւ զօրքից, թէև անկարգ ու
անկանոն, Ատրվշնասպի վրայ ուղարկւած փոք-
րաթիւ հայ զուեղը խոհեմութիւն է համարում
բանակառեղին փոխել, որպէսզի պատերազմի
անյաջող ելք ունեցած դէպքում, կարելի լինէր
երկրի լեռնոտ մասերը ապաւինել: Ուստի հայոց
բանակը, հեռանալով Վարազկերտ գիւղից, ա-
ռաջանում է Մասիս սարի ստորոտն և կանգ
առնում Ակոռի գիւղի մօտ:

Վասակ Մամիկոնեանն իր զօրքը չորս
մասի է բաժանում և իւրաքանչիւր թիւ յանձ-
նում է մի մի նախարարի ու այդպէս կազմ
առնում է թշնամու երեսալուն: Ա-
պաւորաստ ստատում է թշնամու երեսալուն: Ա-
ռաւօտեան, լոյսը բացւելուն պէս, երբ պար-
սիկները, տեսնում են հայ զօրքի սակաւու-
թիւնը, նրանց խելագար են համարում, բայց
և այնպէս յարձակւում են նրանց վրայ: Կռւի

հէնց սկզբում, երբ հայերը դիմադրութեան են պատրաստուում, ձախակողմեան թիւ հրամանատար Գարշոյլ՝ Մաղխազունին իր գումարտակն առած, անցնում է թշնամու կողմը:

Այդ ստոր արարքը, անկասկած, շատ վատ ազդեցութիւն է անում միւսների վրայ, սակայն, առանց յուսահատելու, յարձակում են պարսից հեծելազօրքի վրայ, աջ ու ձախ անխնայ կոտորում և մնացածն ևս փախուստ են դարձնում: Այդ կռուում շատ-շատերի թւում սպանւում է նաև Ատրվշնասպը, որի մահից յետոյ, զօրքի մնացած մասը ցաք-ցրիւ է գալիս և ապաստանում է լեռների ամուր տեղերը:

Այդքան սահաւաթիւ զօրքով այդպիսի խոշոր յաղթանակ տանելուց յետոյ, զօրագունները յաղթական երգերով վերադառնում է Դւին: Առաջին այդ կռիւի, մանաւանդ պարսիկ մարդկանի սպանման բերկրալից լուրը անհուն ուրախութիւն է պատճառում Յովհան արէզարդ հայրապետին, Սահակ Բագրատունուն և սպարապետին, որոնք, մտնելով եկեղեցի, գոհաբանական մաղթանքներ են կատարում և անվերջ հրճւում այդ անակնկալ յաղթութեան վրայ:

5.

Հայերը, այս յաջողութիւնից քաջալերւած

պատգամաւորութեն են ուղարկում վրաց Վախթանկ թագաւորին, յիշեցնում են նրան իր խոստումն և օգնութիւն խնդրում նրանից: Սակայն նա մի ժամանակ ձգձգելուց յետոյ, չի կատարում իր խոստումը: Ահա այդ ժամանակ հայերն իրենց ամբողջ յոյսը դնում են իրենց վրայ:

Վահանն սուստամբութեան դռօշը պարզելու ժամն ալլիս հասած էր համարում: Մարդիկ է ուղարկում Արծրունեաց, Անձեացեաց, Ռըշտունեաց և Մոկաց նախարարներին, որոնք պարսիկների ահից իրենք իրենց կրօնափոխ էին ցոյց տալիս, բացատրում է նրանց պարսիկների դիմադրելու համար իրենց ունեցած ոյժն և առաջարկում է միանալ ուխտապահներին:

Այս ամենի մասին վերջապէս լսում է Պերոզ թագաւորն և սաստիկ զայրանում է Վահանի ու նրա հետ միացած հայ նախարարների վրայ: Վրէժխնդրութեան ոգով լցւած, իր բարկութիւնը թափում է Վահանի եղբօր Վարդի վրայ, ծանր կապանքների տակ է դնում նրան և, մեծ թւով զօրք գումարելով, դարունը բացւելուն պէս ուղարկում է չեր ու Զարեանդ գաւառները խսաիւ պատուիրելով Վահանին ու նրա հետ միաբանողներին կենդանի բռնել և մեծից մինչև փոքրն անխնայ սրի ճարտիկ տալ: Իր զօրքի հրամանատար է կարգում Ատրիւքսէն

պարսիկ իշխանին:

Վահան Մամիկոնեան հէնց որ առնում է պարսից զօրքի Հայաստան արշաւելու լուրը, որին միացած էին հայ ուխտադրութեանն հա, Բիւնազրութեան պատրաստութիւն է տեսնում, գնում է Յովհան կաթողիկոսի մօտ, խորհուրդ է անում նրա հետ և բոլոր նախարարական աններին հրահանգներ է ուղարկում, առանց ժամանակ կորցնելու, իրենց զօրքերով հաւաքւել Դւին քաղաքը:

Երբ իշխաններն իրենց զօրքերով ու ռազմամթերքով եկել կեդրոնացել էին ժամադրւած տեղում, Վահանը, հետն առնելով ծերունի հայ-լուսաբերին, դուրս է գալիս Դւինից, գնում ու բանակ է դնում Արտազ գաւառի Ներսէհապատ գիւղի մօտ, ոչ-շատ հեռու պարսից բանակատեղից:

Պատերազմի նախընթաց երեկոյեան, պատշաճաւոր մաղթանքները կատարելուց յետոյ, կաթողիկոսը ընդարձակ քարոզ է խօսում հայ բանակին, անցեալի կենդանի օրինակներով ուրեքում ու խրախուսում է նրանց, տալիս է իր հայրական օրհնանքը և յորդորում ամենաքին, իրենց յօյսը դնել իրենց բազուկների վրայ, կալեւորութիւն չտալ պարսկական զօրքի թւի քաղմութեան և լի հաւատքով ձակատել նրանց յէմ:

Ապա Վահան ամբողջ զօրքը բաժանում է երեք մասի: Միջի մասը յանձնում է Սահակ Բագրատունուն, աջ թևը՝ Բարշեղ Վահուհուն և ձախ թևը՝ Ներսէհ կամսարակախին, իսկ ինքն իր գնդի զուլնն անցած, մտածում էր ամեն կողմ օգնութեան հասնել, ուր որ կարիք զգացւէր:

Երկու թշնամի բանակները կանգնած էին դէմ առ դէմ. մի թեթև նշան, մի ամենափոքր կասկածելի շարժում մէկ կամ միւս կողմից, և ահա մարդիկ ամենի գազանների նման իրար պիտի յօշոտէին...

Առաւօտեան վաղ արեգակի առաջին ճառագայթները հազիւ էին շրջապատի լեռների զագայթները լուսաւորել, ահա պարսկական զօրքերը շարժւում են իրենց տեղից և խառն ի խուռն շարքերով ընկնում են հայոց վրայ: Աջից ու ձախից հայերն ևս առաջանում են թշնամու վրայ և չորս կողմը սոսկալի մահ սպռնելով, արեան գետեր են հոսեցնում կանաչապարզ դաշտերով:

Սահակ Բագրատունին, Ատրներսէհ զօրափարին նշմարելուն պէս, արծւի նման սլանում է նրա վրայ, մենամարտի է բռնում նրա հետ, հարւած հարւածի ետեից տեղալով, բոլորովին ուժաթափ է անում նրան:

Իսկ Վահան սպարապետն իր հետ վեր-

ցնելով ներսեհ ու Հրահատ կամօտարական եղբայրներին, խոյանում է թշնամու վրայ, միւսում է նրա աջ թևի մէջ և, սոսկալի կոտորած առաջացնելով պարսիկ զօրքի շարքերում, դիակների կոյտերով ծածկում են իրենց շուրջն և ողջ մնացածներին ևս ցրիւ տալիս այլևայլ կողմեր:

Հայոց զօրքի աջ թևը, որ գտնւում էր Բարշեղ Վահուհու հրամանատարութեան տակ, պատերազմի առաջին ընդհանրական թիւնից յուսահատւած, յետ էր նահանջել, սակայն երբ տեսաւ Վահանի ու նրա ընկերների ունեցած յաջողութիւնն ու պարսից շարքերի ցած ու ցրիւ գալը, առաջ անցաւ և, փախչողների ետևից ընկնելով, ձեռքն ընկածին անխնայ կոտորեց:

Պատերազմի դաշտի հետ միասին հայ զօրքը տիրացաւ թշնամու թողած մեծաքանակ հարուստ աւարին և իր մէջ բաժանելուց յետոյ, յաղթական երգերով եկաւ մտաւ Ներսեհապատ գիւղը, ուր սպասում էր նրանց ալէգարդ հայրապետը: Զօրական ու զօրագլուխ, մեծ ու փոքր խառնել էին իրար և ուրախական երգերի ու աղաղակների հուժկու արձագանքներն ամբողջ մթնոլորդը թնդացնում էին...

Սակայն որքան մեծ է լինում Վահան Մամիկոնեանի զարմանքն և ուրախութիւնը, երբ

պարսից ղէմ տարած այդ խոշոր յաղթութեան առաջ բերած ոգևորութեան ընդհանրում անակնկալ կերպով իր մօտն է տեսնում իր Վարդ եղբօրը, որը համարեա հրաշքով ազատւելով բանտից ու կապանքներից, իր մարդիկներով ողջ-առողջ եկել հասել էր հայոց բանակը: Այդ դէպքն ևս պակաս հրճւանք չէ պատճառում ինչպէս սպարապետին, նմանապէս և ամբողջ բանակին:

Ներսեհապատի մօտ հայ զէնքի ունեցած յաղթանակի լուրը կարճ ժամանակում տարածւում է երկրի ամեն կողմերն և անագին եռանդ ու ոգևորութիւն է ներշնչում ժողովրդին:

Վահանը միքանի օր մնալով Ներսեհապատում, վերցնում է իր զօրքն և քաշւում Ծաղկոտն գաւառը հանգստանալու:

6.

Մինչդեռ հայ զօրքը Ծաղկոտն գաւառում բանակ դրած հանգստանում էր, Վրաց Վախթանկ թագաւորից պատգամաւորութիւն է գալիս Վահանի մօտ և յայտնում, թէ պարսիկ զօրքը Մինրան զօրավարի առաջնորդութեամբ յարձակւել է Վրաստանի վրայ և եթէ շուտով օգնութեան չհասնեն, ինքն իր սակաւաթիւ զօրքով չի կարող թշնամուն դիմադրել: Վախ-

Թանկի պատգամաւորները յայնում էին նաև, թէ իբր հոներն ևս հաստատապէս խոստացել են օգնութեան դալ:

Երկու դրացի ըրիստոնեայ ազգերի միջև գոյութիւն ունեցող համաձայնութեան շնորհիւ, Վահան Մամիկոնեան իրեն պարտաւոր էր զգում Վախթանկ թագաւորի խնդիրը կատարելու: Ուստի առանց ժամաւաճառ լինելու, վերջրէն իր զօրքն ու ձանադարն ընկաւ դէպի հիւսիս և, հաշնելով սահմանազուխը, բանակ դրէնց կողակտեան լեռների բարձրավանդակների վրայ: Միքանի օր սպասելուց յետոյ, հակառակ վրաց թագաւորի հաւատացումներին, հայերը հոների կողմից ոչ մի օգնութիւն չէին տեսնում:

Ամենաստոր խարէութիւններով վերջ ի վերջոյ Վախթանկին յաջողում է հայերին համոզել, թէ հոները իսկապէս եկել են և սպասում են գետի հովտում:

Վահան, համոզւած լինելով հանդերձ, որ իր նիզակակիցն իրեն խաբւում է, այնուամենայնիւ իր զօրքով իջնում է կուր գետի հովտն և կարճ ժամանակից, փոխանակ հոնաց օգնական զնգերի, տեսնում է պարսից բազմաթիւ զօրքը, որը Միհրան զօրավարի առաջնորդութեամբ եկել ու կանգ էր առել գետի միւս ափում:

Վահան ու իր զօրականները զայրանում, կատաղում են այդ տմարդի արարմունքի վրայ, բայց ինչ կարելի էր անել. եղածը եղած էր և ուշ էր այդ մասին մտածել, պէտք էր աշխատել թախարդից դուրս դալ:

Վահան կարգաւորում է իր զօրքը, նրա աջ ու ձախ թևերը յանձնում է հայ նախարարներից առաւել փորձաձններին, իսկ ինքն իր Վասակ եղբօր հետ գրաւում է կեդրոնը: Երկու կողմերից հնչող փողերն ազդարարում են պատերազմի սկսւած լինելը, պարսիկներն աշխատում են գետն անցնել և այդ յաջողւում է նրանց, թէև հայերն ամեն ջանք թափում էին փշրել հակառակորդի ոյժը նոյն իսկ գետն անցած ժամանակ:

Մինչ Մամիկոնեան ու իր կորիճներն իրենց յանդուգն յարձակումներով ահ ու սարսափ էին տարածում թշնամու յառաջադանների վրայ և գործը խոստանում էր յաջող ընթացք ստանալ, ահա հայոց կողմից նախապէս պարսից զօրավարի հետ նրանց կողմը անցնելու պայմանաւորւող զօրքի մի մասն իրենց զօրագլուխներով միասին, ինչպէս նաև վրաց զօրքի միքանի զնդեր երեսները դարձնում են ու սկսում փախչել, աղաղակելով՝ «ամեն մարդ թող իր գլուխն ազատի»...

Այդ յուսահատական աղաղակները հայ զօր-

քի մէջքը կոտորում են, լքումն ու յուսահատութիւնն ամենքին զինաթափ է տնում: Վահանի ու Կամսարական եղբայրներին՝ փախչող շարքերը կանգնեցնելու նկատմամբ գործ դրած ամեն ջանք անցնում է անհետեանք: Այն ժամանակ, պատերազմի բազմն արդէն վճռած համարելով, դրանք ևս խոհեմութիւն են համարում յետ նահանջել...

Պարսիկների ցանկացածն էլ հէնց այդ էր և, փառաւոր կերպով օգտւելով առաջ եկած շփոթութիւնից ու իրարանցումից, ընկնում են **փախչողների ետից և սոսկալի կերպով կոտորում:**

Շատ թանկ նստեց հայերին այդ կռիւը, ուր ի թիւս բազմաթիւ ընտիր զօրականների ու զօրավարների սպանւել էին Սահակ Բազրատունի մարզպանն ու Վասակ Մամիկոնեանք և Հրահատ Կամսարականն ևս գերի էր ընկել Միհրան զօրավարի ձեռքը:

Այս դժբաղդ պատերազմը հայոց ոյժը միանգամայն ջլատել էր, և եթէ Վահան Մամիկոնեանի տեղ լինէր մի ուրիշը, բնականաբար պէտք է յուսահատւէր ու ժամ առաջ անձնատուր լինէր թշնամուն: Սակայն նա մնաց անյողգուղ, և այդ մարգու ամբողջ արժանաւորութիւնը հէնց նրանումն էր, որ նա աննկուն ու անընկճելի էր, մանաւանդ այդպիսի տուգ-

նապալից դէպքերում:

Վահանի մօտ մնացել էին ընդամենը միքանի հարիւր հոգի միայն, որոնցով, հասկանալի է, չափազանց դժւար էր նրան պարսից հսկայական ոյժի դէմ կռւել ճակատ առ ճակատ: Ուստի, նա իր փոքրաթիւ մարդկանց և Հրահատ Կամսարականի հետ միասին հեռացաւ այդ կողմերից և անցաւ Տայոց աշխարհի լեռնոտ մասերը:

Միհրան պարսիկը քայլ առ քայլ հետևում էր Մամիկոնեանի բոլոր շարժումներին և նրան ընկճելու համար ոչ մի ջանք չէր խնայում: Նրա նպատակն էր կամ գերի բռնել Վահանին, կամ դաւաճանութեամբ սպանել տալ և կամ խաղաղ ճանապարհով հնազանդութեան բերել:

Միհրան զօրավարը նախընտրեց երրորդ միջոցի գործադրութիւնը, որովհետև առաջին երկուսը յաջողութեան ոչ մի յոյս չէին կարող տնում ներշնչել նրան: Եւ նա Վահան սպարապետի մօտ ուղարկած իր մարդկանց բերանով ասում էր նրան.

— Ի՞նչն է ստիպում քեզ արեաց թագաւորի դէմ ըմբոստանալու և հայրենիքդ աւերածութիւնների ատարելդ դարձնելու: Կսիր իմ խօսքիս, հնազանդիր մեր թագաւորին, իսկ ես միջնորդ կհանդիսանամ ու քեզ կհաշտեցնեմ նրա հետ, այլ և կաշխատեմ, որ քեզ արժա-

նաւայել կերպով պատւի, և գիտեմ, որ թագաւորն իմ խօսքիցս դուրս չի դայ, որովհետեւ ինձ սիրում է:

Վահանը, հաստատ համոզւած լինելով, որ այդ բանազնացութիւններն առանձնապէս ոչ մի հետեանք չեն ունենալու, այնուամենայնիւ ցանկացաւ այդ խորամանկ պարսկի առաջ թափել իր սրտում կուտակւած ամբողջ մաղձը, և պատասխանեց.

— Եթէ վայել չէ, որ ինձ նման մէկը թագաւորին արհամարի ու նրա դէմ ըմբոստանայ, նրան առաւել ևս վայել չէ իր հպատակներին ոնհաւասար աչքով նայել: Դժւար ու դառն է ծառայել մի այնպիսի Թիւրք, որը հաւասար և ուղիղ աչքով չի նայում իր հպատակներին: Ինչ կարելի է սպասել այն թագաւորից, որը չըզիտէ իր հպատակներին ճանաչել ու նրանց արժանիքը գնահատել: Դու ինքդ շատ լաւ ես իմանում, թէ հայոց աշխարհն որքան պիտանի երկիր էր, սակայն ինչպէս վարւեց նրա հետ, երբ այդ երկիրն ամեն կերպ պատրաստ էր հպատակելու: Ո՞ր արժանաւոր մարդուն պատիւների արժանացրեց. չէ՞ որ միայն խաբէբայ, հացկատակ ու ստորաքարշ մարդկանց, և այն էլ ոչ թէ նրանց օգտակար ծառայութիւնների համար, այլ միայն նրա համար, որ նրանք ձեր կրօնն առ երես ընդունել են, իսկ ներքնապէս

ծաղրում ու անգոհնում են այն...

— Ես ինքս երկար ժամանակ աշխատեցի ձեր թագաւորին օգլտակար լինել ու հաւատարմութեամբ ծառայել, բայց երբ տեսայ, որ նրա աչքում միայն կեղծաւորութիւնը, շողոքորթութիւնն ու խաբէութիւնը յարգ ունեն, նրանք են առաջ քաշւում, որոնք պատրաստ են պատրելու, նենգելու և խաբելու,— ուրիշ ճանապարհ չկալողացայ գտնել, եթէ ոչ ինքս ինձ հոգեպէս սպանել, ճշմարտութիւնն ուրանալ և ստութեան ու մոլորութեան ետից դնալ: Իսկ այժմ առանց քաշւելու ասում եմ, որ իմ արածն ստութիւն ու խաբէութիւն էր...

— Եւ որովհետեւ իմ անարժան վարմունքս ինձ սաստիկ տանջում էր, վճռեցի թագաւորի երկիւղը սրաիցս հանել և ապրել ազատ մարդու նման: Դրանից յետոյ, ինչ էլ որ պատահի, տանջանք, չարչարանք, սով, աղքատութիւն, վճռել եմ համբերութեամբ տանել...

— Համոզւած եմ, թէ ինչ որ դու խոստանում ես, կարող ես կատարել և քո թագաւորը կհամաձայնի քո ասածներին: Սակայն այդ դեռ շատ քիչ է: Ամեն բանից առաջ, նա պէտք է համաձայնի, որ քրիստոնէութիւնն ազատ կերպով պաշտւի Հայաստանում: Չպէտք է բոլոր կրակապաշտութիւն ընդունողներին ընտիր մարդիկ համարել, իսկ, ընդհակառակը, նրանք, որոնք

չեն ցանկանում այդ անել, նրանց անպիտան համարել: Մարդկանց պէտք է գնահատել իրենց գործերի, և ոչ թէ այս կամ այն կրօնը դաւանելու համեմատ:

— Եթէ թագաւորն այդ աչքով կնայի մեզ վրայ, — մենք պատրաստ ենք ձեզ հնազանդելու, իսկ եթէ նա կշարունակի իր նախկին ընթացքը, այդ դէպքում մեզ ուրիշ բան չէ մնում, եթէ ոչ մինչև ամենավերջին զինուորը կուել: Մեր վերջին որոշումն է այս և դրանից մի մագաչափ անգամ չենք շեղւելու, որքան էլ հսկայական լինի արեաց թագաւորի ոյժը:

Այդ բանազնացութիւնները դեռ չէին վերջացել, որ Միհրան զօրավարը Պերոզից հրաման է ստանում Պարսկաստան վերադառնալու: Նա իր հետ վերցնում է հայ գերիներին ու ճանապարհ ընկնում: Ճանապարհին իր եղբօր օգնութեամբ Հրահատ Կամսարականին յաջողում է փախչել ու գալ միանալ իրայիններին:

Իսկ Վահան Մամիկոնեան, Միհրանի գէպի Պարսկաստան հեռանալը լսելով, գալիս է Այրարատ և էջմիածնի մայր տաճարը մտնելով մաղթանք է կատարել սալիս: Ժամանակն արդէն ձմեռ էր և նա այդտեղից անցնում է Դւին ձմեռն անցկացնելու:

7.

Շատ չէր անցել, որ Վրաց թագաւորի կողմից դարձեալ մարզիկ են գալիս և հայոց մէջ լուր տարածում, թէ Սահակ Բագրատունին ու Վահանի եղբայր Վասակը, որոնք ընկել էին Վրաստանի վերջին ճակատամարտում, ողջ են և թէ հարկաւար է զօրքով գնալ ու նրանց գտնել:

Վահանը շատ լաւ էր հասկանում Վրաց թագաւորի խարէութիւնները, որոնցով ամեն կերպ աշխատում էր հայոց ոյժերը վերջնականապէս ջլատել: Ուստի ամենեւին խորհուրդ չէր տալիս, զօրքը տեղից շարժել, ասելով, որ առանց այդ էլ սակաւաթիւ է, իսկ եթէ մի մասն ևս գէպի Վրաստան ճանապարհի, պարսից կողմից որեւիցէ յարձակում եղած ժամանակ, իրենք բոլորովին անկարող կլինեն դիմադրելու:

Սակայն, Վահանի յորդորներն անուշադիր թողին, որովհետեւ ժողովրդի միջից միքանի միամիտների և, մանաւանդ, Սահակի ու Վասակի ընտանիքների գործ դրած ճնշման ազդեցութեան տակ, սրուեց Մուշեղ Մամիկոնեանի առաջնորդութեամբ փոքրիկ մի գունդ ուղարկել Վրաց աշխարհ Սահակին ու Վասակին փնտռելու համար:

Կատարւեց այն, ինչ որ Վահան ենթադրում էր: Գարունը բացւելուն պէս, պարսից զօրքը նոր պատրաստութեամբ, Զարմինը Հազարաւուխտի առաջնորդութեամբ ճանապարհ է ընկնում դէպի Հայաստան: Հայ ուրացող նախարարներից ոմանք, առնելով այդ նոր արշաւանքի լուրը, շտապում են Հազարաւուխտին ընդառաջ և նրան իմացնում, թէ հայոց զօրքի մի մասը Վրաստան է և Վահան Մամիկոնեանի մօտ շատ քիչ զօրք է գտնւում:

Պարսիկ զօրավարի համար շատ թանկ էին այդ տեղեկութիւնները հայոց ոյժի և Վահանի ուր գտնւելու նկատմամբ, ուստի, նա ուղեց օգուտել պայմանների յաջող դասաւորութիւնից, արագացրեց իր ընթացքը, անցաւ Երասխ գետը, հասաւ Արտաշատ և այդտեղից շարժեց դէպի Դւին ու քաղաքի մօտերը բանակ դրեց:

Վահան ու իր ուխտակից ընկերները, տեսնելով Հազարաւուխտի բանակը, որ քաղաքի շրջակայ ամբողջ դաշար բռնել էր, անխոհմտութիւն համարեցին իրենց մի բուռն ոյժով թշնամու դէմ ճակատել:

Նրանց ֆուռ էր աննկատելի կերպով քաղաքից հեռանալ միայն: Գիշերւայ մթութիւնից օգուտելով, Վահան Մամիկոնեանի խորհրդով միմի, երկու-երկու դուրս ելան և քաղաքից դուրս նորից խմբւելով, յանկարծ յարձակեցին պարսից

մի թևի վրայ և, սաստիկ շփոթութիւն ձգելով նրանց մէջ, ճանապարհ բացեցին իրենց համար և հեռացան գնացին Սաղաւադ աշխարհի ամուր տեղերը:

Այդ ժամանակ է, որ Մուշեղը, ամբողջ ձմեռը Վրաստանի դաշտերը թափառելուց ու ոչ մի հետեանքի չհասնելուց յետոյ, վերադառնում է Հայաստան:

Իսկ Հազարաւուխտ պարսիկը չարաչար հալածում էր Վահանին և անցած տեղերից ոչ մէկում չկարողանալով նրան պատահել, իր բարկութիւնը թափում էր քաղաքների ու գիւղերի անմեղ բնակիչների վրայ և ամեն կողմ կոտորած ու աւեր սփռում:

Այսու հանդերձ Վահան իրեն անապահով էր համարում պարսից Հայաստանում, ուստի և անցնում է յունաց բաժինը: Պարսիկ զօրավարները լսում է, որ Վահանը Կամսարական եղբայրների հետ միասին իր սակաւաթիւ զօրքով Վարայվարտ գիւղում է գտնւում, իսկոյն զիմում է այնտեղ:

Սակայն իզուր, որովհետև նա վաղուց արդէն հեռացել էր այնտեղից: Հազարաւուխտն անակնկալ կերպով այդտեղ պատահում է Ներսէս ու Հրահատ Կամսարական եղբայրների ընտանիքներին, որոնց և գերում է, պատուով պահում իր բանակում, յուսալով, թէ նրանց մի-

Ջոցով, եթէ ոչ Վահանին, գոնէ նրա անբաժան
կամսարական եղբայրներին կարող կլինի ձեռք
ձգել: Բայց դարձեալ չգուր...:

Այդ անվերջ ու անհետեանք ղեգերումներին
հետոյ, բոլորովին յուսակաւոր եղած, Հազա-
րաւոխտը դարձեալ վերադառնում է Բասէն
գաւառը:

Այդտեղ է, որ նրան գալիս գտնում է
Պերոզի կողմից ուղարկւած պատգամաւորն և
հաղորդում թագաւորի կամքը, թէ նա պատրաստ-
ւում է հեփթաղների վրայ արշաւելու, ուստի
Հազարաւոխտին յանձնարարում էր Շապուհ
զօրավարին հայոց վրայ մարզպան կարգել և
երթալ Վրաստան, Վախթանգ թագաւորի դէմ,
որը հեփթաղների գաշնակիցն էր:

Հազարաւոխտը Շապուհին կարգում է
մարզպան, տալով նրան օգնական Գրիհոն Սիւ-
նեցուն, թողնում է նրա մօտ 4000 հոգուց
բաղկացած զօրք, իսկ ինքն արշաւում է Վրաս-
տանի վրայ:

Պարսկական զէնքի Հայաստանում կրած
անյաջողութիւնները Շապուհը ամբողջովին վե-
ջադրում էր Վահանի արտասովոր քաջութեան,
ուստի հաստատապէս վճռում է, ինչպէս էլ որ
լինի, անպատճառ ձեռք անցնել նրան, որով և
ամեն բան կվերջանար:

Նա ուղեց օգտուել Կամսարականների կա-

նանց իր մօտ գերի գտնւելու հանգամանքից:
Քյոչ նպատակով լուր ուղարկեց երկու եղ-
բօրը՝ նրանց կանանց իր մօտ լինելու մասին,
խորհուրդ տւեց հեռանալ Վահանից և անձնա-
տուր լինել, որի համար խոստանում էր արեաց
թագաւորի կողմից բարձր պատիւների արժա-
նացնել: Եւ երբ, Կամսարականների անդրդւելի
մնալու պատճառով, այդ փորձն անցաւ անհե-
տեանք, նա սաստիկ կատաղեց և, իր զօրքը
ցրւելով երկրի ամեն կողմը, սկսեց հետամուտ
լինել Վահանի խմբին:

Բայց Վահանն այն պտուղը չէր, որ այդ-
քան հեշտութեամբ ծուղակն ընկնէր: Երբ իմա-
ցաւ Շապուհի մտադրութիւնները, անցաւ հայ-
րենի գաւառը՝ Տարօն և շարունակ զիւղից գիւղ
տեղափոխւելով, երբեմն երբեմն յանկարծակի
յարձակւում էր պարսից գումարտակների վրայ
և մահացու հարձակներ էր հասցնում նրանց:

Ինչ կարող էր անել Շապուհը, բացի կա-
տաղելուց ու փրփրալուց:

Այս ու այն կողմը շրջելուց յետոյ, Վահան
հասնում է Արշարունեսաց գաւառի Նրէզ գիւղը:
Քյոչ լուրն տանելուն պէս, Շապուհ հաւաքում
է իր զօրքը, գալիս ու մօտենում է գիւղին:

Հնարագէտ Վահանը, իր գունդը զօրացնելով
Նրէզի գիւղացիներով, գիշերւայ մի ժամանակ,
եռերի կողմից յարձակւում է պարսիկների վրայ:

և այնպիսի շփոթութիւն է առաջացնում, որ նրանք, զուգահեռ կորցրած, սկսում են իրար կոտորել: Այդ փոքրիկ ընդհարման ժամանակ, պարսիկները մօտ վեց հարիւր մարդ են կորցնում, իսկ մնացածը, սարսափահար եղած, ցրվւ է գալիս զանազան կողմեր: Վահան աւելորդ է համարում նրանց հետեւել, վերցնում է իր մարդկանց, գնում է Շտէ գիւղը և գիշերւայ մնացած մասը անց է կացնում այնտեղ:

Ստացւած հարւածը ծանր էր, և Շապուհ առանց ժամանակ կորցնելու, հաւաքում է իր զօրքն ու ընկնում Վահանի ետեւից: Սպարապետը, երբ տեսնում է թշնամու խիստ մօտեցած լինելը, իր մարդկանց կարգի է բերում և մի հակիրճ ճառով ոգի ու եռանդ է ներշնչում նրանց:

Մինչ Վահան կռւի պատրաստութեամբ էր զբաղւած, ահա թշնամին իր բազմաթիւ շարքերով պարսպանում է նրանց առաջ: Պարսկական բանակի աչքի ընկնող բազմութիւնը յուսահատեցնում է Վահանի գունդը, որի մի խոշոր մասը, երեսը դարձնելով, թողնում ու հեռանում է: Մնացել էին Վահան, Կամսարական եղբայրները, Մուշեղ Մամիկոնեան և ուրիշ միջանի հոգի, թւով մօտ երեսուն:

Երբ թշնամի կողմերը բոլորովին մօտեցել էին միմեանց, Վահանի մարդկանց միջից մէկը

բարձր ձայնով կանչում է. «Տէր, զգոյշ եղիր»: «Զգոյշ լինելու ժամանակն անցել է, այժմ մեռնելու ժամանակ է», -- պատասխանում է Վահան, և երեսը խաչակնքելով, իր մարդիկներով առիւծի նման սլանում է թշնամու վրայ և արեան գետեր հոսեցնելով չորս կողմը, պատռում անցնում է պարսից շարքերի միջով: Այդ կռիւն ևս շատ թանկ նստեց պարսիկներին, որոնցից ընկնողների մէջ էր նաև Գդիհոն Սիւնեցին:

Այդ ամենայաջող զինուածն ևս այդքան ազիտորմ վախճան ունենալուց յետոյ, Շապուհ այլևս բոլորովին յուսահատւեց: Այդ պարտութիւնն այն աստիճան սարսափահար էր արել Շապուհին ու իր զօրքին, որ Վահանի մասին խօսել անգամ չէին համարձակւում:

Հեփթաղների դէմ Պերոզի սկսած պատերազմը վերջանում է բոլորովին անյաջող և ինքն ևս սպանւում է այդ կռուում:

Այդ պատճառով Հազարաւուխտ ու Շապուհ երկուսն ևս կանչւում են Պարսկաստան՝ պետական խորհրդին մասնակցելու համար: Իսկ Վահան իր մարդկանցով գնում է Դւին և միառժամանակ հանդատանում է այնտեղ, 483 թ.:

Պերոզի տեղը գահն է բարձրանում նրա

եղբայրը Վաղարշ, որ աւելի խաղաղասէր ու խոհուն մարդ էր, քան իր նախորդը:

Ամեն բանից առաջ, Վաղարշ ուզեց ծանօթանալ իր պետութեան մասերը կազմող օտար աշխարհների դրութեան հետ: Այդ նպատակով խորհուրդ կազմեց իր մեծամեծներից. այդտեղ էին նաև Հայաստանի վերջին անցքերին լաւ ծանօթ Զարմինը Հաղարաւուխտն ու Շապուհը:

Դրանցից առաջինը բազմաթիւ փաստերով ապացուցանում էր, թէ ինչպիսի սխալ քաղաքականութեան էր հետևում Պերոզը, որի շնորհիւ, օրինակ, Հայաստանի նման արգաւանդ ու բնական հարստութեամբ օժտւած մի երկիր, որ կարող էր պարսից տէրութեան մեծամեծ օգուտներ տալ, այսօր աւերակ դրութեան մէջ էր:

Պերոզի կործանիչ քաղաքականութեան շնորհիւ էր դարձեալ, աւելացնում էր Հաղարաւուխտը, որ Վահան Մամիկոնեանի նման խելացի, ուժեղ կամքի տէր և քաջ պատերազմողը զինւելով պարսից կառավարութեան դէմ, ամբողջ երկիրն ապստամբեցրեց և կարողացաւ, ոչ միայն խոշոր յաղթութիւններ տանել մեր դէմ, հապա մինչև այսօր էլ անընկճելի մնալ: Հարցրէք, — ասում էր Զարմինը, — Շապուհ զօրավարին, որն այդ երկիրը մի ժամանակ կա-

ռավարել է, և նա այդ զարմանալի մարդու համար շատ բաներ կպատմի ձեզ:

Եւ յիրաւի, երբ Շապուհից հարցւում է՝ Հայաստանի վերջին անցքերի մասին, նա ամենայն յափշտակութեամբ պատմում է հայոց սպարապետի հետ ունեցած վերջին կռիւների մասին, ուր սակաւաթիւ զօրքով նշանաւոր յաղթութիւններ էր տարել նա, և իր խօսքը վերջացնում է նրանով, թէ «Վահան Մամիկոնեան գերբնական մի մարդ է և օժտւած արտաքոյ կարգի ընդունակութիւններով»:

Վաղարշ ու իր մեծամեծները, այդ ամենը լսելով նոյն իսկ իրենց մարդկանց բերանից, սաստիկ զարմացան: Թագաւորը հաշկանում էր, որ աւելորդ էր եղած վնասների մասին խօսել, այլ հարկաւոր էր մտածել այն զարմանի մասին, որով կարելի էր այդ խոցերը բժշկել, և միակ զարմանը տեսնում էր հայոց հետ քաղցրութեամբ վարւելու քաղաքականութեան մէջ:

Ուստի իսկոյն որոշւում է Հայաստան ուղարկել Նիխոր անունով պարսկին, որ մեղմ բնութեան տէր մարդ էր և պատուիրւում է, որքան կարելի է սիրաշահել հայերի սիրտը ու աշխատել խաղաղութեամբ ու քաղցրութեամբ հնազանդութեան բերել Վահանին:

Նիխոր, գարունը բացւելուն պէս, բաւական թւով զօրք վերցնելով, գալիս է գէպի

Հայաստան, սակայն, չհամարձակելով երկրի ներսերը մանել, կանգ է առնում Հեր գաւառի Նւարսակ գիւղի մօտ և երկու պատգամաւոր է ուղարկում Վահանի մօտ՝ թագաւորի կամքը հաղորդելու:

Վահան հայ նախարարներին խորհրդի է հրաւիրում և եկած պատգամաւորներին առաջարկում է այդ ատեանի առաջ խօսել: Նրանց միտքն իմանալուց յետոյ, արձակում է, խոստանալով մի-երկու օրից պատասխանել:

Վահանի հասկացողութիւնն երկրի դրութեան, ժողովրդի պահանջների վերաբերմամբ նոյնն էր, ինչ որ դրանից միքանի տարի առաջ, ուստի Նիխորի պատգամաւորներին պատասխանում է այսպէս.

—Մեր պահանջները կարելի է ամփոփել երեք առաջարկութեան մէջ, և, այդ առաջարկներն ընդունելու ու կատարելու մասին ձեր թագաւորը պէտք է մեզ գրաւոր ու իր կնիքով կնքւած խոստում տայ: Այդ գէպքում մենք ևս մեր պարտականութիւնները կկատարենք այնպէս, ինչպէս ընդունել ու կատարել են մեր նախնիքները: Իսկ եթէ դուք կամ ձեր թագաւորը չէք ցանկանայ ընդունել մեր պայմանները, մենք ևս չենք կարող կատարել ձեր հրամանները: Մեզ համար նախընտրելի է սզատ մեռնել, քան ստրուկ ապրել...

Առաջին. պէտք է թոյլատրւի, որ մեր ժողովուրդն ազատօրէն պաշտի քրիստոնէական կրօնը, ուր որ էլ կամենայ. պարսկական կրօնի դարձնելու ոչ մի ջանք չպէտք է գործ դրւի ձեր կողմից, ինչպէս նաև կրօնն ուրանալու պատճառով պատիւներ ու պաշտօններ չպէտք է տրւեն, և կրակատները հայոց աշխարհից բոլորովին պէտք է վերացւեն:

Երկրորդ. խիստ ընտրութիւն պէտք է կատարել ազնիւ ու անախտան մարդկանց միջև. իւրաքանչիւր ոք պէտք է վարձատրւի կամ պատժւի իր կատարած լաւ կամ վատ գործերի համաձայն, և իրենց կրօնը փոխողները՝ որպէս արժանաւոր մարդիկ՝ առաջ չպէտք է քաշւեն:

Երրորդ. թագաւորն անձամբ պէտք է քննի իւրաքանչիւրի մասին եղած ամբաստանութիւնները. առանց դատաստանի ու երկու կողմերն ևս քննելու, ոչ ոք չպէտք է պատժւի կամ վարձատրւի:

Իսկ եթէ,—ուշիացրեց Վահան պատգամաւորներին,—հարկ լինի այդ բոլորի մասին բացատրութիւն տալ, մենք պատրաստ ենք գալ ու տեսնել Նիխորի հետ:

Արեաց թագաւորի ներկայացուցիչն ու նրա մարդիկ հայոց առաջարկները համարեցին միանգամայն արդար ու իրաւացի: Սակայն Նիխոր կամեցաւ անձամբ տեսնել Վահան Մա-

միկրոնեանի հետ ու այդ ամենի մասին երես
առ երես խօսել, ուստի առանձին նամակով
նրան հրաւիրեց իր մօտ:

Վահան յօժարեց այդ բանին և, առնելով
իր հետ իր փոքրիկ գունդն և ուխտակից ըն-
կերներին, գնաց Արտազ գաւառի Նղինդ գիւղը,
այդտեղից իմաց տւեց իր գալու մասին: Ապա-
հովութեան համար, իբրև պատանդ Նիխորից
պահանջեց պարսիկ նշանաւորներից ութը հոգի
և իրայիններին պատւիրեց պատուով վարւել
նրանց հետ, իսկ ինքն իր գնդով նախարար-
ներից ոմանց հետ դիմեց գէպի Նւարսակ:
Գիւղին մօտենալուն պէս, պատերազմ գնալու
ձեռով հրամայեց դրօշակներ պարզել և փողեր
հնչեցնել ի նշան իր ժամանելուն:

Փողերի ձայները շփոթութեան մէջ ձգեցին
Նիխորին ու նրա զօրագունդը, կարծելով, թէ
Վահան իրենց վրայ պատերազմելու է գալիս:
Նիխոր իր մարդկանցից միքանի հոգի նրա մօտ
է ուղարկում ասելու, թէ դա անպատշաճ վար-
մունք է, որովհետև այդ թոյլատրւում է միայն
արեաց թագաւորի սպարապետին, երբ նա որև-
իցէ տեղ է գնում: Վահան նրանց պատասխա-
նում է. «Նախ ինձ արեաց թագաւորի ծառայ
դարձրէք և ասպա պահանջեցէք ձեր օրէնքները
յարդել, որ առանց ձեզ էլ գիտեմ»:

Այսպէս, Վահան յաղթական կերպով մատու-

գիւղն ու ներկայացաւ Նիխորին, որն ամենայն
յարգանքով և ուրախութեամբ ընդունեց նրան
իր մարդիկներով, յիշեց իր թագաւորի ողջոյնը,
որն և Վահան ընդունեց խոնարհութեամբ ու
ակնածութեամբ: Երկար բացատրութիւններից
յետոյ, Նիխոր ու Վահան եկան կատարեալ
համաձայնութեան:

Պարսիկ զօրավարը շատ ուրախացաւ իրեն
եղած յանձնարարութեան այդքան յաջող վեր-
ջանալու վրայ և ի պատիւ Վահանի ու նրա
ուխտապահ ընկերների ձուխ հացկերոյթ պատ-
րաստել տւեց, որի ժամանակ ուխտադրուժ
նախարարները, ներս չառնելով, ստիպւած էին
դուրսը սպասել:

Մինչ Նիխոր հայոց հետ հաշտութեան դա-
շինք կնքելով էր զբաղւած, լուր է հասնում
նրան, որ Պերոզի որդի Զարեհը Վաղարշ թա-
գաւորի դէմ ապստամբելով, աշխատում է գա-
հին տիրանալ:

Այդ շատ լաւ առիթ էր Վահանի համար
իր հաւատարմութիւնը ցոյց տալու արեաց թա-
գաւորին, և Նիխորի խորհրդով մի գունդ հայ
զօրք ուղարկեց Վաղարշին՝ վրէն Վանանդեցու
առաջնորդութեամբ, իսկ ինքը վերադաձաւ
Դին, 484 թ.:

Երբ գլուխն ազատեց հոգսերից, Վահան
յիշեց Նիխոր զօրավարի խօսքը, թէ վատ չէր

լինի, եթէ անձամբ գնար թագաւորի մօտ ու տեսնէր: Նա իր այդ այցելութիւնն օգտակար էր համարում շատ տեսակէտերից, ուստի վերջրեց իր հետ ուխտապահ նախարարներին ու մի գունդ զօրք և ելաւ գնաց պարսից դուռը: Երբ նա տեղ հասաւ, պատերազմն արդէն վերջացել էր և, Զարեհ սպանւելով, Վաղարշ դարձեալ հաստատուել էր իր գահի վրայ:

Մեծ փառքով ու պատուով ընդունեց հայոց սպարապետին ու նրա ուխտակից ընկերներին, երկար խօսակցեց վերջին անցքերի մասին, ուր գլխաւոր յանցաւորը համարում էր իր եղբայր Պերոգին, որի անմիտ քաղաքականութիւնից ոչ միայն Հայաստանը, այլ նոյն իսկ Պարսկաստանը մեծամեծ վնասներ էր կրել:

Նորից խօսակցութեան առարկայ դարձաւ Նւարսակի դաշնադրութեան պայմաններն և թագաւորն ինքն ևս իր կողմից հաստատելով այդ, Վահանին շնորհեց Մամիկոնեան տոհմի տանուտէրութիւնն և կարգեց հայոց զօրքի սպարապետ: Վահան լի բերկրութեամբ, հանգիստ խղճով իր մարդիկներով վերադարձաւ Հայաստան:

Յովհան Մանդակունին ու Ժողովրդի խռոն բազմութիւն զրկաբաց ընդունեցին հայ ուխտապահներին, որոնք իրենց ամենաթանկագին սրբութիւնները զոհաբերելով, կուրծք տւած,

տարիներ պաշտպանել էին հայրենիքի շահերն ու մայրենի եկեղեցու պատիւը: Ապա էջմիածնի մայր տաճարում զոհաբանական մաղթանքներ կատարելուց յետոյ, ամենքն էլ վերադարձան Դւին:

Այսպէս, Հայաստանը չորս տարի արիւնհեղութիւնների ու խռովութիւնների ասպարէզ դառնալուց յետոյ, վերջապէս հանգստացաւ և Հայաստան մարզպան ուղարկեց Անդեկան պարսիկը:

Պարսիկ մարզպանը շատ երկար չմնաց: Նա մօտից ծանօթացաւ Վահանի հետ և նրա մէջ գտաւ վարչական անձի բոլոր յատկութիւնները: Ոչ միայն այդքան, հապա նա Վահանին համարեց մարզպանութեան միակ յարմարաւոր անձը՝ որպէս տեղացի, ծանօթ երկրի պահանջներին ու պէտքերին, գիտակից Ժողովրդի բնաւորութեան և, որ գլխաւորն էր, ընդարձակ Ժողովրդականութիւն վայելող ու ազդեցիկ:

Այդ մասին գրեց ու խորհուրդ տւեց իր թագաւորին, և Վաղարշ, լսելով նրա խօսքին, առանձին հրովարտակով վահան Մամիկոնեանին կարգեց հայոց վրայ մարզպան:

Այս վերջին յաջողութեան առաջ բերած ուրախութիւնն անչափ ու անսահման էր... Հրճոււմ և ուրախանում էր ամբողջ երկիրը

իրբե մի մարդ. ժողովուրդը աօնում էր իր արինսով ձեռք բերած ազատութեան այդ օրը և ուխտապահ իշխանները, Վահանի հետ գրկախառնելով, միմեանց շնորհաւորում էին իրենց տարած այդ մեծ յաղթանակը...

Քանի Վաղարշ ողջ էր, Հայաստանում աիրում էր խաղաղութիւն ու անդորրութիւն, սակայն երբ նա մեռաւ պարսկական զահը բարձրացաւ Պերոզի որդի՝ բարբարոսական բարքի տէր Կաւատը,—երկիրը դարձեալ աղմկեց, որովհետեւ Վաղարշի հայոց տւած ազատութիւնները խլեց և հայերին սկսեց կատաղի կերպով հալածել:

Հայաստան ուղարկեց մոգերի մի ահաշին բազմութիւն, հրամայեց երկրի բոլոր մասերում կրակատներ հիմնել և վերականգնել պարսկական կրակի պաշտամունքը,

Վահան Մամիկոնեան չկարողացաւ տանել այդ բռնութիւնները, նորից գլուխ բարձրացրեց և, զօրք ժողովելով, յարձակեց պարսից տեղապահ զօրքի վրայ, ջախջախեց նրան, մոգերին կոտորեց, կրակատները քարուքանդ արեց և վերահաստատեց նախկին կարգերը:

Կաւատի մէջ եռում էր վրէժխնդրութեան ոգին, սակայն արտաքին ու ներքին խռովութիւնները նրա ձեռքն ու ոտքը կաշկանդում էին և, ուրիշ ելք չգտնելով, ստիպւեց հաշտու-

թիւն կայացնել Վահանի հետ:

Վահան Մամիկոնեանի կառավարութիւնը տևում է 25 տարի և այդ ամբողջ ժամանակի ընթացքում նա երկիրը կառավարում էր մեծ հմտութեամբ ու իմաստութեամբ:

Նա մեռաւ 510 թ.:

16. Սահակ և Մեսրոպ Վ. Փափագեանի . . . — „ 15 „
17. Վահան Մամիկոնեան—Մ. Առաքելեանի — „ 15 „
18. Голодъ—Ս. Զաւարեանի — p. 30 „
19. Կանոնագիր շտեմարան-զանձարանի—Ս.
Զաւարեանի — „ 2 „
20. Վարկատու ընկերութեան կանոնադրու-
թիւն (փոխադրութիւն) — „ 30 „
21. Հացահատիկների մարգարին կուլտուրան
—Գ. Ղարազեօղեանի — „ 5 „
22. Ի՞նչ բան է գէմալօն—Ի. Բեթօփօնսկու
(թարգմանութիւն) — „ 5 կ.
23. Ինձ մի՛ խնդրիր—բօմանս. խօսք Յ. Թու-
մանեանի, ներդաշնակութիւն Ա. Մայի-
շեանի — „ 40 „
24. Ոգի Հայաստանի—գունատիպ նկար . . . — „ 50 „
25. Արտաշէսի յուզարկաւորութիւնը—գունա-
տիպ նկար — „ 25 „

Պանկեսը գտնուում է Միութեան գրասենականում:
Հասցեն՝ Баку, Армянский Культурный Союз.

ՏՊԱԳՐՈՒՄ ԵՆ ԳՐԱԳՆԵՐ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՅ

- № 8. Թորոս իշխան.
- № 9. Լեոն Երկրորդ:
- № 10. Մամիկոնեան իշխաններ. Մո...



5824

Էջերական տպարան «Բազմ»

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.